
**ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԻ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ**

**ԶՈՒՅԱՆ-ԿՐԱՅՉԻՐ ՊԻՐՈՇԿԱ
(Հունգարիա, ք. Բուդապեշտ)**

Պատմական աղբյուրները վկայում են Հունգարիայի տարածքում հայերի ներկայության մասին արդեն վաղ միջնադարում: Կեզայի, Թուրոցի աղբյուրները հիշատակում են, որ Կարպատների ավազանում վերաբնակվելու ընթացքում հունգարների հետ հայեր էլ են ժամանել այդ տարածաշրջան: Հայերի ներկայությունը Բալկաններում այդ ժամանակաշրջանում կարող է կապված լինել, մասնավորապես, պավլիկյան աղանդավորական շարժման ներկայացուցիչների՝ Հայաստանից աքտրվելու հետ, ինչի մասին խոսում են հայ պատմիչներ Մեբեոսը, Ստեփանոս Տարոնցին, Ասողիկը: XIII դ.՝ Արպաղների թագավորության օրոք, մի խոշոր հայկական բնակավայր է գոյություն ունեցել թագավորական մայրաքաղաք Էստերգոմում: Հունգար թագավոր Էնդրե II-ը խաչակրաց պատերազմների ժամանակ՝ 1218 թ. ընթացքում, դաշինք է կնքել Կիլիկիայի հայկական թագավորության հետ. այդ մասին են վկայում հայ պատմիչներ Սմբատ Գունդստարբը, Գրիգոր Սկևռացին, Միքայել Ասորին: Ճիշտ է, երկու թագավորական ընտանիքների միջև չի հաջողվում նախատեսված դինաստիական կապը հաստատել, այնուամենայնիվ, հունգար թագավորի հետ հայերի մի մեծ խումբ է տեղափոխվում ու բնակություն հաստատում Էստերգոմում՝ Հունգարիայի այն ժամանակվա մայրաքաղաքում:

Հունգարիայի տարածքներում 1241 թ. մոնղոլների արշավանքը զգալի ավերածությունների և մարդկային զոհերի տեղիք տվեց: Բելա IV թագավորի՝ այդ տարիների քաղաքականությունն ուղղված էր ամայացած շրջանները վերաբնակեցնելուն և վերակառուցելուն: Այս քաղաքականության շնորհիվ 1243 թ. թաթարական հորդանների՝ Հունգարիա կատարած արշավանքից հետո հայերին, որ արդեն ապրում էին Հունգարիայում, թագավորի հրամանագրով կալվածքներ հատկացվեցին, և ամբողջ Հունգարիայի տարածքում ազատ առևտուր անելու իրավունք տրվեց²: Էստերգոմի հայ գաղթավայրը գոյատևեց մինչև 1290 թ., երբ *Terra Armenorum* հայկական կալվածքը թագավորի հրամանագրով տրվեց Ագոշտոն վանականների միաբանությանը:

Հետագա դարաշրջաններում հայերի ներկայության մասին փաստում են Հունգարիայի և Տրանսիլվանիայի տարածքներում պահպանված բնակավայրերի անվանումները (*“Örményes, Örményszékes, Mezőörményes”* և

¹ **Պինգիրյան Գ.**, Հայկական աղբյուրները հունգարների և հայ-հունգարական կապերի մասին [Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից (այսուհետև՝ Հայ-հունգարական...), խմբ.՝ Բարխուդարյան Վ. Բ., Վյորոշ Ա., Ե., 1983, էջ 61]:

² **Շյուց Է.**, Հայերի արտագաղթի գլխավոր ուղղությունները միջին դարերում և Էստերգոմի հայ գաղութը (Հայ-հունգարական..., էջ 38):

այլն) կամ էլ դրանց լատինական տարբերակները: Հնարավոր է, որ Բալկաններից կամ Վալաքիայից եկած հայերն են այդ բնակավայրերի հիմնադիրները կամ էլ արդեն գոյություն ունեցող բնակավայրերը վերաբնակեցնողները: Տալմաչի (*Talmacsi*) քաղաքի եպիսկոպոսության կնիքը (*Martini Episcopi Armenorum de Tolmachy, 1343*) վկայում է այդ տարածաշրջանում հայ եկեղեցական խոշոր կենտրոնի և, համապատասխանորեն հայկական համեմատաբար մեծ թվաքանակով բնակչության մասին: Տալմաչիի եպիսկոպոսությունը, ըստ XIX դ. ռումինացի պատմաբաններ Բ. Հաշդեուի և Դ. Տոցիլեսկուի, հիմնադրել են Վալաքիայի Արգեշ (*Arges*) քաղաքից եկած հայերը, որոնք, համաձայն նշված պատմաբանների կարծիքի (հիմնված հնագիտական, ճարտարապետության պատմության, զինանշագիտական հետազոտությանների վրա), ծագումով Վանա լճի մերձափնյա Արճեշ քաղաքից էին³: Դրիմի հարուստ հայ վաճառականները⁴ կարևոր քաղաքական-դիվանագիտական դեր են ունեցել այդ տարածաշրջանում իրենց կապերի, տարբեր լեզուների տիրապետելու և, իհարկե, նյութական կարողության շնորհիվ հաճախ են տարբեր ծառայություններ մատուցել Կարպատյան ավազանի տիրակալներին (Պետրու Վարդիկ՝ XVI դ., Պետրոս Ապետիկ, Գաբրիել, Դիոդատո Արմենո՝ XVII դ.)⁵:

Հայերի առաջին խոշոր ներգաղթը պատմական Հունգարիա տեղի ունեցավ XVI դարում: 1497 թ. Լեհաստանի թագավոր Ալբերտի գործերի կողմից Մոլդովայի մայրաքաղաք Սուչավան գրավելուց հետո, մոտ 700 հայ ընտանիքներ տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին Տրանսիլվանիայի, Հունգարիայի և Գալիցիայի տարբեր քաղաքներում⁶: Չնայած որ արդեն 1500-ական թվականներից է գրանցված հայերի ներկայությունը Տրանսիլվանիայում, մեծ թվաքանակով հայ բնակչություն այստեղ է տեղափոխվել XVII դ. երկրորդ կեսին:

Գրավոր աղբյուրներ չեն պահպանվել, սակայն ավանդության համաձայն՝ Տրանսիլվանիայում բնակություն հաստատած հայերը ծագումով Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անիից էին⁷: Նույն ավանդության համաձայն՝ Անիի բնակիչները 1239-ին քաղաքի հյուսիսային դարպասով են լքել քաղաքը՝ թշնամուց փրկվելու համար. «...Ամեն մի տղամարդ էրկու խուրջին է վերցրել. մեկի մեջ դրել է Աստվածաշունչը և այլ եկեղեցական գրքեր, այդ թվում՝ շարականների գրքեր, որ օտար էրկրում էլ աղոթք ասեն մայրենի լեզվով, իսկ մյուս խուրջինը լցրել են ոսկով, թանկարժեք քարերով ու ոսկե զարդերով... այդպես են մեր հայրերը հեռացել իրենց մարմարե պալատներից...»⁸: Այս ավանդության մեջ կա ճշմարտություն՝ վտարանդիները հաճախ հասարակության ունևոր շերտերից են եղել և հայրենի հողը լքել են իրենց հոգևորականների հետ՝

³ *Gazdovits Miklós, Az erdelyi ormények története. Kriterion, Kolozsvár, 2006, p. 111-116.*

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Ե., 1976, էջ 352:

⁵ **Քոլանջյան Ս.**, Հայերի մասնակցությունը հակաթուրքական լիգայի ստեղծման և Հունգարիայի ազատագրման գործում (Հայ-հունգարական..., էջ 106-117):

⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, էջ 387:

⁷ Վերաբնակված հայերի ազգանունների մեջ հանդիպում է Անեցի ազգանունը (տես **Szongott Kristóf, A magyarhoni örmény családok genealógiája, Todorán, Szamosújvár, 1898.**)

⁸ **Szongott Kristóf, Szamosújvár története III, Todorán, 1901, p. 3.**

նյութական ու հոգևոր ունեցվածքով հանդերձ: Փախստականները սովորաբար իրենց հեռանալը ժամանակավոր են համարել՝ փորձել են կապը պահպանել նախկին բնակավայրի հետ, բայց հաճախ ստիպված են եղել ավելի ու ավելի հեռանալ հայրենիքից: Անիի փախստականները բնակություն են հաստատել սկզբում Կովկասում, հետո՝ Ղրիմում⁹:

Ղրիմում բնակություն հաստատած հայերը, ըստ ծննդավայրի և զբաղմունքի, համասեռ խումբ չէին կազմում: Հայ բնակչություն Ղրիմի թերակղզում գոյություն է ունեցել արդեն մ.թ.ա. I դարում: Դրանք հիմնականում վաճառականներ էին: Այդ տարածքը առևտրական կարևոր օղակ է եղել հյուսիսի և հարավի փոքրասիական պետությունների միջև: Մեծ քանակությամբ հայ բնակչություն է տեղափոխվում Ղրիմի թերակղզի XI դ.՝ կապված Բագրատունյաց թագավորության անկման հետ: Այստեղ են բնակություն հաստատել նաև Կոստանդնուպոլսից, Բալկաններից, Փոքր Ասիայից եկած՝ ինչ-ինչ պատճառներով հայրենիքից հեռացած հայերը: Ղրիմում վերաբնակված հայերը միշտ չէ, որ մնացել են այստեղ, այլ որոշ ժամանակ հետո արտագաղթել են ավելի հեռավոր երկրներ՝ Ուկրաինա, Ռուսաստան, Լեհաստան¹⁰: Ղրիմի հայ գաղթավայրի կենտրոններն էին Թեոդոսիան (Կաֆա), Խերսոնեսը, Սուրխաթը, Ղարասուբագարը և Սուրբ Խաչը: XI դ. այս գաղութը հիմնականում կազմված էր վաճառականներից: Ավելի ուշ այստեղ բնակվեցին արհեստավորներ և հողագործներ, որոնք հիմնականում զբաղվում էին այգեգործությամբ¹¹: Ղրիմի թերակղզու հայ բնակչության թվաքանակը գաղթավայրի ծաղկման շրջանում՝ XV դ.՝ զգալի է եղել. օրինակ՝ 70-հազարանոց Թեոդոսիան ունեցել է 46 հազար հայ բնակիչ: 1475 թ. Ղրիմի քաղաքները ենթարկվեցին թուրք-թաթար հորդանների միացյալ հարձակմանը՝ ծովից և ցամաքից միաժամանակ: Դա եղավ Ղրիմի հայ գաղութի վերջը. հայերը զանգվածաբար լքեցին Ղրիմը:

Հայ բնակչության մի մասը տեղափոխվեց Ռուսաստան, Թուրքիա, մյուս մասը՝ դեպի արևմուտք և, մասնավորապես, Մոլդովա: Կայուն առևտրական կապեր ունեցող հայությունը բնակություն հաստատեց Մոլդովայի այն քաղաքներում, որտեղ արդեն XIV դ. սկզբից գոյություն ուներ հայ բնակչություն (Յաշ, Ֆոչան, Բոտոշան, Սուչավա և այլն): Հայ բնակչության թվաքանակն այնքան զգալի էր այս քաղաքներում, իսկ տեղի գաղութներն այնքան հարուստ էին, որ արդեն 1350 թ. Բոտոշանում, իսկ 1395-ին Յաշում հայերն ունեին իրենց քարակառույց եկեղեցիները: Ղրիմից Մոլդովա տեղափոխված հայերը սկզբում արտոնություններ ստացան: Սակայն մեկ հարյուրամյակ հետո, Ստեֆան Ռարեշի թագավորության ժամանակ՝ 1551-1552 թթ., հալածանքների ենթարկվեցին կրոնական հողի վրա: Բազմաթիվ հայկական եկեղեցիներ ավերվեցին, ձեռագրեր այրվեցին, ինչի մասին վկայել է Մինաս Թոխատեցին («Ողբ ի վե-բայ Օլախաց երկրին հայերուն»): Հետապնդումներն առաջին հերթին ուղղված էին ունևոր վաճառականների ընտանիքների և հարուստ հայ եկեղեցիների դեմ, որն էլ հանգեցրեց հայերի զանգվածա-յին արտա-

⁹ Hovhannesian E., *Armenia népe, Gödöllő, 1942, p. 256.*

¹⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 349:

¹¹ Հայ գաղթավայրերի պատմություն, խմբ.՝ Միքայելյան Վ., հ. I. Ե., 2003, էջ 161:

գաղթին դեպի Լեհաստան ու Տրանսիլվանիա: Մոլդովայի հայ գաղութը, սակայն, չվերացավ: Արտագաղթած բնակիչների մի մասը վերադարձավ արևմտյան երկրամասերից, ավելին՝ Մոլդովայում բնակություն հաստատեց ջալալիների շարժման (1598-1609 թթ.) և Շահ Աբասի ավերիչ հարձակումներից (1603-1605 թթ.) ու սովի սպառնալիքից պատմական Հայաստանից արտագաղթած հայության մի մասը: Մոլդովայից նորից հայերի արտագաղթ եղավ. մի կողմից՝ Գեորգե Դուկա վոյեվոդայի հարկային քաղաքականության, մյուս կողմից էլ՝ այդ տարածքում տեղի ունեցած երկու լեհ-թուրքական պատերազմների պատճառով, որոնք վտանգեցին տեղի հայ բնակչության ֆիզիկական գոյությունը: 1660-1680-ականներին Մոլդովայի հայերը զանգվածորեն գաղթեցին Տրանսիլվանիա և Լեհաստանի քաղաքներ, որտեղ արդեն գոյություն ուներ հայ բնակչություն: Լեհաստանից, սակայն, նրանց մեծ մասը, դիմակայելով բռնի կաթողիկոսական վտանգին, փրկություն է փնտրել կրոնական և ազգային հարցերում ավելի հանդուրժողական Տրանսիլվանիայում¹²:

Այսպիսով՝ Տրանսիլվանիայում բնակություն հաստատած հայերի մի մասը Մոլդովայից, մյուսը՝ Լեհաստանից էին տեղափոխվել: Կարելի է ենթադրել, որ վերաբնակված հայերը նշված երկրներում, մինչև Տրանսիլվանիա տեղափոխվելը, բավական երկար են ապրել. այդ մասին են վկայում նրանց ազգանունները: *Բոզդանովիչ*, *Սենկովիչ*, *Յակոբովիչ*, *Շտեֆանովիչ*, *Շահինովիչ* ազգանուններով հայերը պետք է որ Լեհաստանում բնակվելու ժամանակ փոխած լինեին իրենց հայկական ազգանունները: Իսկ *Պատրուբանյ* (ռումիներեն՝ “*patru bani*” նշանակում է չորս դրամ), *Կապդերո* (ռումիներեն՝ եզի գլուխ), *Չորոտար* (ռումիներեն՝ կոշկակար), *Դայրուկաստ* (ռումիներեն՝ ցորեն տուր) ազգանուններով հայերը Մոլդովայից եկածներ են: XVIII դարի փաստաթղթերում գրանցվել են Թուրքիայից (պատմական Հայաստանից) ժամանած հայերի ազգանուններ՝ *Մապոնջի* (օճառագործ), *Պապուզջի* (փափուճ պատրաստող), *Հավաջի* (հավա պատրաստող), *Քաֆտանջի* (դերձակ), *Քասասյի* (մսագործ), *Չամչիան* (չամիչ պատրաստող), *Գոշկար* (կոշկակար), որոնց նախնիները, ինչպես երևում է, արհեստագործներ են եղել: Տրանսիլվանիայի հայերի հետևյալ ազգանունները կապված են տեղանունների հետ և վկայում են այդ գաղթավայրի հայության տարբեր վայրերից սերված լինելը. *Բոչանջի* (Բոտոշանից), *Իսմիրիան* (Իզմիրից), *Ֆոզանջի* (Ֆոչան քաղաքից), *Սեչովցի* (Սուչավայից), *Սոցի* (Յաշից), *Մոլդովան*, *Մոլդավցի*, *Գամենցի* (կամենեցցի), *Հալեպցի* (Հալեպից), *Կոստանդնուպոլցի*, *Անեցի* և այլն¹³: Այսպիսով՝ կարելի է հետևություն անել, որ Տրանսիլվանիայի հայկական գաղութը թե՛ իր բնակիչների ծագ

¹² Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 393-94:

¹³ **Szongott Kristóf**, *A magyarhoni örmény családok genealógiája*, **Ávedik Lukács**, *Szabad királyi Erzsébetváros monográfiája. Szamosújvár, 1898*, p. 255-257. **Garda Dezső**, *Gyergyói örmények könyve, I, Budapest, 2007*, p. 103-218.

ման, թե՛ գաղութում բնակություն հաստատելու ժամանակի առումով բազմաշերտ է եղել:

Պատմական Հունգարիայի պետության ստեղծման օրից (X դ.) Տրանսիլվանիան կազմել է պետության Կարպատների լեռնաշղթայով սահմանափակված արևելյան մասը: 1541 թ. Օսմանյան Թուրքիայի բանակը գրավեց երկրի մայրաքաղաք Բուդան, ինչը եղավ Հունգարիայի թուրք գավթիչների կողմից 150 տարի տևած տիրապետության սկիզբը: Հունգարիան բաժանվեց երեք մասի: Հյուսիսային մասը շարունակում էր մնալ հունգար թագավորության ներքո, հարավային տարածքները օսմանցի թուրքերի ձեռքին էին, իսկ երրորդ արևելյան մասում, Թուրքիայի և քրիստոնյա արևմուտքի ընդհանուր համաձայնությամբ, ստեղծվեց մի պետություն՝ Տրանսիլվանիայի իշխանությունը, որը քրիստոնյա Եվրոպան բաժանում էր օսմանյան աշխարհից: Նշենք, որ թուրք գավթիչներն իրենց տիրապետության տարիներին ջանք չեն խնայել, որ թագավորական Հունգարիան և Տրանսիլվանիայի իշխանությունը հակաթուրքական որևէ դաշինք չկնքեն: Տրանսիլվանիայի իշխանները գաղտնի հավատարմության երդում էին տալիս հունգար թագավորին, բայց միևնույն ժամանակ, ստիպված էին տուրք տալ Թուրքիայի սուլթանին՝ դրա դիմաց մասնակի անկախություն վայելելով: Տրանսիլվանիայի արտաքին քաղաքականությունը պայմանավորված էր թուրքերի կողմից նոր տարածքներ գրավելու նպատակով՝ իշխանության վրա հարձակման մշտական վտանգով: Տրանսիլվանիայի իշխանները միշտ ձգտել են լավ հարաբերություններ ունենալ ռումինական վոյեվոդաների, լեհական և հունգարական թագավորությունների հետ և, միաժամանակ, դիվանագիտական կապեր պահպանել Թուրքիայի հետ: Այդ ժամանակաշրջանում երկրի արտաքին քաղաքականությունը բնութագրվում էր զինված հարձակումից սահմանները պաշտպանելու մշտական պատրաստությամբ և փոփոխվող արտաքին պայմանների նկատմամբ հարմարվելու ունակությամբ: Այս քաղաքականությունը նպաստեց այդ տարածաշրջանում, XVI դ. սկսած, Տրանսիլվանիայի՝ քաղաքական կարևոր դեր խաղալուն¹⁴:

Տրանսիլվանիայի մասնակի անկախությունը, սակայն, երկրի բնակչությանը չփրկեց տասնհինգամյա պատերազմից (1591-1606) և դրան հետևած սովից, համաճարակներից ու չքավորությունից: 1657-1661 թթ. թուրքական հարձակումները ողբերգական հետևանքներ ունեցան Տրանսիլվանիայի համար, որի բնակչությունն անընդհատ տեղաշարժերի մեջ էր այդ տարիներին: Թուրքերից փրկվելու համար Տրանսիլվանիայի բնակչության մի մասը փախչում է դեպի Մոլդովա, մյուսը՝ սահմանային տարածքներից (Պարթիում) տեղափոխվում Տրանսիլվանիայի ներքին շրջանները, գյուղերից՝ դեպի քաղաքներ, այնտեղից՝ ավելի ապահով վայրեր: Երբ 1660-ին Միհայ Ապաֆին, որ չորս տարի անցկացրել էր թաթարական գերության մեջ, նշանակվեց Տրանսիլվանիայի իշխան, նրան

¹⁴ Տրանսիլվանիայի իշխան Իշտվան Բատորին (1533-1586), 1575 թ. ընտրվել է Լեհաստանի թագավոր: Իշխան Ժիգմոնդ Բատորին (1572-1613), հակաթուրքական դաշինք է կնքել վալաքիայի Միհալ վիտեռազուլ և Մոլդովայի Շտեֆան Ռազվան վոյեվոդաների հետ՝ ստանալով Տրանսիլվանիայի, վալաքիայի և Մոլդովայի իշխանի տիտղոսը (1594): Գաբոր Բեթլենին 1620 թ. ընտրել են Հունգարիայի իշխան:

ակնհայտ էր դարձել, որ ներկա պայմաններում Տրանսիլվանիայի գոյությունը պահպանելու համար հարկավոր է ոչ թե ընտրություն անել Հաբսբուրգների մտերմությունը շահելու կամ թուրքերի հետ լեզու գըտնելու միջև, այլ անհրաժեշտ է որդեգրել հաշվեկշռված, փոխզիջումների վրա հիմնված քաղաքականություն¹⁵: Այդպիսի քաղաքականությունն էլ նպաստեց երկրի զարգացմանը, տնտեսական և քաղաքական բարենպաստ իրադրության առաջացմանը, որոնք էլ, իրենց հերթին, պայմանավորեցին մեծ թվով բնակչության ներգաղթը Տրանսիլվանիա հարևան երկրներից:

Վաղ միջնադարից սկսած՝ Տրանսիլվանիան բազմազգ, ազգային ու կրոնական խտրականությունից զերծ մի երկիր էր և սիրով ընդունել ու հանգրվան է տվել ներգաղթողներին: Այս երկրի հիմնական բնակչությունը կազմել են հունգարացիները, ռումինացիներն ու սաքսոնները: Ներգաղթի մի մեծ ալիք դեպի այդ երկիր տեղի ունեցավ 1664-ին և 1680-ականին: Ներգաղթող բնակչության կազմում էին ոչ միայն վաճառականներ, արհեստավորներ ու գյուղացիներ, այլև կաթոլիկ Լեհաստանից կրոնական հալածանքների հետևանքով փախած ունիթոռ կրոնավորներ կամ Հունգարիայում հետապնդումների ենթարկված բողոքական տերտերներ: Այսպիսով, XVII դ. երկրորդ կեսին Տրանսիլվանիան հանդուրժողականություն ցուցաբերեց ոչ միայն տարբեր ազգային խմբերի, այլև կրոնական զանազան ուղղությունների ներկայացուցիչների նկատմամբ: Միկլոշ Բեթլենը Միհայ Տելեկիին՝ Տրանսիլվանիայի վարչապետին, 1672 թ. գրած նամակում առաջարկում է երկրի դատարկված քաղաքներն ու գյուղերը վերաբնակեցնել հարևան երկրներում հալածանքի ենթարկվող բնակչությամբ: Միհայ Ապաֆին հետևողականորեն կիրառեց այդ քաղաքականությունը՝ հիմնականում արևելյան ու հարավային տարածաշրջաններից ներգաղթող բնակչության համար ապահովելով նաև դիվանագիտական պաշտպանություն. այդ կերպ 1668-ին նա հրաժարվեց կատարել Մոլդովայի վոյեվոդա Գեիկանի խնդրանքը՝ հետ դարձնել մի քանի գյուղերի բնակչությունը¹⁶: Ներգաղթի քաղաքականության կանխամտածվածության մասին է խոսում այն փաստը, որ երկրում սիրով էին ընդունում գաղթող արհեստավորների ու վաճառականների՝ տարբեր տեսակի արտոնություններ տալով նրանց: Մոլդովայի հայ բնակչությանը հենց ինքը՝ Միհայ Ապաֆին է հրավիրել Տրանսիլվանիա: Նրանց մի մասին Էբեշֆալվայի կալվածքում է բնակեցրել և հատուկ հրամանագրով արտոնել ազատ առևտուր անելու իրավունքը¹⁷: Հայերի գաղթին Տրանսիլվանիա նպաստել է նաև այն փաստը, որ Տրանսիլվանիայի առևտրական դերը թուրք-լեհական (1672-1676) և թուրք-ռուսական (1679-1681) պատերազմների հետևանքով խիստ աճել էր, քանի որ այդ պատերազմների շրջանում Սև և Բալթիկ ծովերով կատարվող առևտրի ճանապարհները Տրանսիլվանիայի վրայով էին անցնում:

Տրանսիլվանիայում հայերը սկզբում բնակություն են հաստատել սահմանամերձ Չիկսեպվիզ, Դյերոյոսենտմիկլոշ և Կանտա քաղաքներում,

¹⁵ Erdély története, Akadémiai kiadó, Budapest, 1987, Kötet II, p. 726, 807.

¹⁶ Նոյն տեղում, էջ 809:

¹⁷ Ávedik Lukács, Szabad királyi Erzsébetváros monográfiája. Szamosújvár, 1896, Szemelvények I-IX.

որոնք գտնվում էին արևելյան Կարպատների լեռնանցքների շրջակայքում և հարմար դիրք էին գրավում առևտրի տեսանկյունից: Այդ քաղաքներում արդեն կար հայ բնակչություն, որը հիմնականում բաղկացած էր վաճառականների ընտանիքներից: Պատմական աղբյուրները խոսում են այդ վայրերում հայերի ներկայության մասին դեռևս XVII դ. սկզբից: Դերոյոսենումիկոշ քաղաքի հայ բնակչությունը հիշատակող առաջին գրավոր փաստաթուղթը՝ գրված 1637 թ., վկայում է «Օտարների գերեզմանոցի» ստեղծման մասին, որտեղ հետագայում կառուցվեց տեղի հայկական եկեղեցին: Շիմոն Տեոդորովիչի 1734 թ. գրառման համաձայն՝ 1654 թ. երկու եղբայրներ Ազբեյն ու Վարտիգը բնակություն են հաստատել այդ քաղաքում: Ըստ մեզ հասած գրավոր աղբյուրների՝ հայերը Չիկսեպվիգում բնակվել են 1642 թվականից, թեպետ տեղի հայկական գերեզմանատանը կա 1573-ով թվագրվող մի գերեզմանաքար¹⁸: Տարբեր պաշտոնական գրառումների համաձայն՝ հայաբնակ քաղաքները կապի մեջ են եղել միմյանց հետ, օրինակ՝ Էրժիբեստվարոշ քաղաքի մի ծննդյան վկայականում նշված է, որ այդ քաղաքի բնակիչ Նիկոլի դուստրն ամուսնացել է Դերոյոսենումիկոշի բնակիչ Երանոսի կրտսեր եղբոր հետ¹⁹:

Հունգարահայերի պատմագրության ներկայացուցիչ Կրիշտոֆ Լուկաչին իր մենագրության մեջ (1859 թ.) հայերի՝ Տրանսիլվանիա ներգաղթի տարեթիվը նշում է 1672-ը՝ այն հիմնավորելով Մոլդովայի հայերի սուսկայի հալածանքներով, երբ նրանք հրաժարվել են իրենց դավանանքը փոխել: Ըստ Լուկաչիի՝ հայերը Մոլդովայից արտագաղթել են 1669 թ. ոչ միայն Դուկա վոյեվոդայի հալածանքներից, այլև թուրքական հարձակման վտանգից խուսափելով: Մոլդովայից հեռանալուց հետո հայերի այդ խումբը, երեք տարի Կարպատյան լեռներում անցկացնելով, Տրանսիլվանիա է տեղափոխվել Ապաֆի իշխանի հրավերով: Ավեդիկ Լուկաչն էլ Էրժիբեստվարոշի պատմությանը նվիրված մենագրությունում (1896 թ.) խոսում է գաղթի երկու ալիքների մասին: 1654 թ. հայերի՝ Տրանսիլվանիա ժամանած ոչ մեծ խումբը բնակություն հաստատեց տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Դերոյոյում: Այս խմբի մի մասը նորից վերադարձավ Մոլդովա: Ավելի ուշ, Մոլդովայից հայերի մի այլ խմբի արտագաղթի պատճառը Դուկա վոյեվոդայի դեմ ապստամբության ղեկավար Հենկուլի հայազգի լինելն էր. հայերը, որոնք նախկինում տառապել էին վոյեվոդայի ձեռնարկած կրոնական հետապնդումներից, վախենում էին Դուկայի վրեժխնդրությունից: Կրիշտոֆ Սոնգոտը Մամոշուվարին նվիրած բազմահատոր մենագրության մեջ (1898-1901 թթ.) նույնպես ազգային և կրոնական հողի վրա կատարվող հետապնդումներն է համարում Մոլդովայի հայերի՝ Տրանսիլվանիա գաղթելու պատճառը, նաև հիշատակում, որ հայերը, արտագաղթելով Մոլդովայից, մի քանի տարի քոչվորի վիճակում են եղել Կարպատյան լեռներում²⁰: Այս վերջին պնդումը, հաշվի առնելով ժամանակահատվածի տևականությունը, կասկածներ կարող է հարուցել:

¹⁸ Bogos Mária, *A szépvízi örmény közösség, Budapest, 1997, p. 42,44.*

¹⁹ Tarisznyás Márton, *Gyergyószentmiklósi adatok az erdélyi örménység történeti néprajzához (Gyergyó történeti néprajza, Kritérion, 1982, p. 215)*, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 387:

²⁰ Szongott Kristóf, *Szamosújvár szab. kir. város mongráfiája IV, Todorán, 1903, p. 13.*

Ըստ երևույթին, հեղինակները արտագաղթած հայերի՝ տարիներով քոչվոր կյանք վարելու պատմությունն ընդօրինակել են ճիզվիտ վանական Ռուդոլֆ Բրզենսկու XVII դ. վերջին գրած աշխատությունից²¹:

Մեզ հասած պատմական գրավոր աղբյուրները վկայում են, որ Մուլդովայի հայ վաճառականները Տրանսիլվանիա են տեղափոխվել Միհայ Ապաֆի իշխանի հրավերով: Դրա մասին գրավոր փաստաթուղթ չի պահպանվել, բայց իշխանի՝ հայերի նկատմամբ ունեցած բարի վերաբերմունքի ապացույց են ազատ առևտրի այն արտոնությունը, որ 1684 թ. ստացել են Պետելե բնակավայրի հայ վաճառականները²², և այն փաստը, որ իշխանը Եբեշֆալվայի կալվածքում է բնակեցրել հայ ընտանիքների մի մասին: Հայ հարուստ ընտանիքները սկզբում փորձել են բնակություն հաստատել Բեստերցե քաղաքում: Մուչավայի հայերի՝ Բեստերցե տեղափոխվելու թվականը (1672 թ.) պատմագրությունը ընդունում է հայերի՝ Տրանսիլվանիայում բնակություն հաստատելու տարեթիվը, թեպետ և՛ դրանից առաջ, և՛ դրանից հետո հայ գաղթականներ են ժամանել Տրանսիլվանիա²³:

Հայերի՝ Տրանսիլվանիայում բնակություն հաստատելուց հետո անկայուն ու փոթորկալից մի ժամանակաշրջան (կես դար) եղավ այդ երկրի պատմության մեջ: Թուրք ու թաթար հորդաները շարունակում էին սպառնալ Տրանսիլվանիայի իշխանությանը: 1689 թ. երկիրը թուրքերից ազատագրվեց, և Հունգարիան ու նրա հետ՝ նաև Տրանսիլվանիան անցան Հաբսբուրգների տիրապետության տակ: Նոր զավթիչների վերաբերմունքը բնակչության նկատմամբ շատ չէր տարբերվում նախորդների՝ թուրքերի կամ թաթարների վերաբերմունքից: Տյուկոլիի և Ռակոցիի գլխավորած ազատագրական պայքարի և պատերազմական վիճակի ստեղծման հետևանքով, Տրանսիլվանիա գաղթած հայերի մի մասը վերադառնում է Մուլդովա²⁴: Մյուս մասը տեղափոխվում է երկրի ներքին շրջաններ՝ բնակություն հաստատելով Էբեշֆալվայում, Պետելեում, Ֆելֆալույում, Գյորգենյսենտիմրեում, Բոնյայում, Չիկշոմլոյում, Դյուլաֆեհերվարում և այլ վայրերում: Տրանսիլվանիայում հաստատվող հայերն ընտրում էին այնպիսի բնակավայրեր, որտեղ կային առևտրական կենտրոններ, կամ էլ դրանք հարմար էին այդպիսի կենտրոններ ստեղծելու համար:

Մարդահամարների տվյալներից կարելի է եզրակացնել, որ Մուլդովայից հայերի արտագաղթը տևել է մինչև XVIII դ. կեսը: Այդ ընթացքում հայերի մի մասը գաղթել է նաև Լեհաստան: Տրանսիլվանիայի հայ գաղթավայրերի կազմավորումը ավարտվում է XVIII դ. վերջում: Դերոյոսենտմիկլոշից հայերի մի մեծ խումբ տեղափոխվել է Սամոշովար, ուր արդեն տեղափոխվել էին Դյուլաֆեհերվար քաղաքի հայերը: Կանտա քաղաքի հայ գաղութը դադարել է գոյություն ունենալուց մոտավորապես 1780 թ.: Դերոյոսենտմիկլոշից հայերը տեղափոխվել են շրջակա գյուղե-

²¹ **Gazdovits Miklós**, *նշվ. աշխ.*, էջ 153-158:

²² **Szongott Kristóf**, *Szamosújvár szab. kir. város monográfiája III, Szamosújvár, Todorán, 1901, p. 28.*

²³ **Trócsányi Zsolt**, *Az erdélyi örmények jogállása a Diploma Leopoldinum korában* (Հայ-հունգարական..., էջ 168).

²⁴ **Tarisznayás Márton**, *նշվ. աշխ.*, էջ 215:

ընդհանուր, Ալֆալու, Ռեմետե, Տոպլիցա, Տյուդյեշ, որտեղ հայ վաճառականները խանութներ են բացել, իսկ ապրանքները գետով տեղափոխելու համար օգտագործել են լաստանավակներ²⁵:

Մեզ հասած գրավոր աղբյուրները տեղեկություններ չեն տալիս Տրանսիլվանիայի հայ գաղութի բնակչության ճշգրիտ թվաքանակի մասին: Հունգարահայերի առաջին պատմագիր Կրիշտոֆ Լուկաչիի կարծիքով, հայկական ընտանիքների թիվը Տրանսիլվանիայում կազմել է 3000²⁶: Նույն թվաքանակն է արձանագրում նաև Հունգարիայի պաշտոնական պատմագրությունը: Հավանական է, որ Կրիշտոֆ Լուկաչին հիմք է ընդունել հայ ընտանիքների ամբողջ թիվը, որոնք Սուրբավայից արտագաղթել են Տրանսիլվանիա և Լեհաստան: Սուրեն Քոլանջյանը, հիմնվելով հայ աղբյուրների վրա, Տրանսիլվանիայի հայության թիվը համարում է 10.000-ին մոտ²⁷: Անտալ Վյորոշը 1700-ական թվականներից Հունգարիայի արխիվներում պահպանված մարդահամարների տվյալների հիման վրա եզրակացնում է, որ 1720 թ. շրջանում Տրանսիլվանիայում ապրել են մոտավորապես 800 հայ ընտանիքներ: Հաշվի առնելով, որ այն ժամանակ ընտանիքները բաղկացած են եղել միջինը 8-10 հոգուց, կստանանք հայերի թիվը՝ է 6400-8000 հոգի²⁸. դա կազմել է Տրանսիլվանիայի այն ժամանակվա բնակչության (800.000 հոգի) մոտավորապես 1%-ը²⁹: Այդ ժամանակաշրջանում, երբ Տրանսիլվանիայի ամենամեծ՝ Բրաշշո և Մեբեն քաղաքների բնակչությունը ընդամենը 3-5 հազար էր, իսկ Կոլոժվար քաղաքի երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում խաղացած դերը պայմանավորված էր շրջակա գյուղերով, հայության ներգաղթը պետք է որ կարևոր իրադարձություն լիներ երկրի կյանքում: Այս կարևորությունը առանձնահատուկ նշանակություն է ստանում հատկապես այն պատճառով, որ ներգաղթած հայերը զգալի նյութական կարողություն ունեին:

Բնակություն հաստատած հայերի թիվը հետագայում, մեզ հասած տվյալների համաձայն, անընդհատ տատանվել է: Ըստ Դյերդոսենտմիկլոշի մարդահամարի՝ այստեղ 1716 թ. ապրում էին 48 հայ ընտանիքներ, իսկ 1721-ին նրանց թիվը հասել է 80-ի: Դարավերջին տեղի հայ գաղութում արդեն ապրել են շուրջ 200 հայ ընտանիքներ: 1800-ականին այստեղ բնակվել են 246 հայ ընտանիքներ: 1808-ի հրդեհի ժամանակ 80 հայ ընտանիքներ կորցրել են իրենց ունեցվածքը, իսկ ամբողջ գաղթավայրի բնակչության թիվը տարիների ընթացքում զգալիորեն փոփոխվել է. սկզբից աճել է, հետո՝ նվազել, հետագայում՝ նորից աճել: Ըստ 1847 թ. մարդահամարի՝ այստեղ ապրել են 310 հայ ընտանիքներ³⁰:

Սամոշույվարում 1716-ին բնակվել են 130 հայ ընտանիքներ, 1721-ին՝ 136, իսկ 1728-ի հրդեհից հետո ցուցակում գրանցված էին 187 հայ ըն-

²⁵ Նույն տեղում, էջ 216:

²⁶ **Lukácsi Kristóf**: *Emlékezetek az erdélyi örmények múlt életéből*, Bécs, 1859, p. 18-19.

²⁷ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 388:

²⁸ **Vörös Antal**, *A magyarországi örmény társadalom a feudalizmus korában (1672-1848)* (Հայ-հունգարական..., էջ 131).

²⁹ *Erdély története 1606-tól 1830-ig*, Akadémiai kiadó, Budapest, 1987, p. 806.

³⁰ **Tarisznyos Mánron**, *նշվ. աշխ.*, էջ 217:

տանիքներ³¹: Էրժիբետավարոշում 1727 թ. բնակվել են 100 հայ ընտանիքներ³²: Որոշ քաղաքների հայ բնակչության թվի կտրուկ բարձրացումը XVII դարում պայմանավորված էր ոչ միայն բնակչության բնական աճով, այլև գաղթավայրի նյութական զարգացմամբ, որը նպաստում էր Հունգարիայից և հարևան երկրներից նորանոր հայ ընտանիքների ներգաղթին:

Ըստ պատմագիտական աղբյուրների՝ Տրանսիլվանիայում բնակություն հաստատած հայերի գլխավոր զբաղմունքը արհեստագործությունը և առևտուրն էին: Հունգարահայերի պատմագիրներից մեկի՝ Կրիշտոֆ Սոնգոտի աշխատություններում հանդիպում ենք ինչ-որ չափով իրար հակասող տվյալներ հայ բնակչության զբաղմունքի վերաբերյալ: Սամոշույվարի հայությանը վերաբերող մենագրության բազմաթիվ գլուխներում Սոնգոտը գրում է տեղի համայնքի հայ վաճառականների մասին՝ հատուկ նշելով նրանց աշխատասիրությունը, հմտությունը, նվիրվածությունը համայնքին և այլն³³: Նա ընդգծում է, որ հողագործ, գյուղացի չի եղել ներգաղթող հայերի մեջ: Սա ակնհայտ է, որովհետև շրջակա հայ գաղթավայրերի բնակիչների հիմնական զբաղմունքներն էին առևտուրը և արհեստները: Ավելին՝ քաջ հայտնի է, որ միջնադարում Հայաստանից մեծ արհավիրքների ժամանակ առաջին հերթին արտագաղթել է ունևոր բնակչությունը, որը նյութապես կարող էր հաստատվել բնակության նոր վայրում: Քանի որ հայերն արդեն ունեին հազարամյա առևտրի փորձ, նաև առևտրական կապեր՝ աշխարհի ամենատարբեր հատվածներում, բնականաբար, առևտուրն էր այն հիմնական գործունեությունը, որ որդեգրում էին արտագաղթած հայերը: Նախկինում ստեղծած կապերն ու ծանոթությունները, լեզվին տիրապետելը, նոր պայմաններին հարմարվելու ունակությունը վերաբնակված հայերին օգնեցին իրենց տեղը գտնել բնակության նոր վայրերում ու նոր ազգային հասարակություններում, որոնք մեծամասնությամբ ֆեոդալական կառուցվածք ունեին և թույլ զարգացած բուրժուական հարաբերություններ:

Ընդունելով վերը բերված փաստերը՝ Սոնգոտը, սակայն, պնդում է, թե Անիից արտագաղթած և Տրանսիլվանիայում վերաբնակված հայերը ազնվական ծագում են ունեցել, ու դժվար թե արտաքին հանգամանքներն են նրանց ստիպել արհեստներով կամ էլ առևտրով զբաղվել³⁴: Այս պնդումը, կարծում ենք, ավելի շուտ ավանդույթների շարքին է պատկանում: Բհարկե, ներգաղթածների մեջ եղել են նաև ազնվական ծագումով մարդիկ: Ամենայն հավանականությամբ, այդ մարդիկ, վաճառական լինելով, ազնվական տիտղոս են ստացել Թուրքիայի (Արևմտյան Հայաստանի) տարածքում՝ դատելով նրանց ազգանուններից՝ Ամիրաի, Ամիրաշ, Ամիրովիչ, որոնք, հավանական է՝ □ամիրա□ (էմիր) բառից են ծագում³⁵: Սոնգոտի արտահայտությունը, թե՛ «...ով որ տերտեր կամ բժիշկ չէր, նա առևտրով է վաստակել իր հարստությունը», պետք է դիտվի որպես պատմագրի ժամանակաշրջանի պրոյեկտումը ներգաղթի ժամանակաշրջանի

³¹ Szongott Kristóf, Szamosújvár monográfiája, I, p. 117, 121, 128.

³² pvedik Lukacs, նշվ. աշխ., էջ 66-67:

³³ Szongott Kristóf, Szamosújvár szab. kir. város monográfiája, IV.1903, p. 14.

³⁴ Szongott Kristóf, Szamosújvár szab.kir. város monográfiája, III, p. 5.

³⁵ Szongott Kristóf, A magyarországi örmények genealógiája.

վրա, քանի որ XVII դարում Տրանսիլվանիայի հասարակությունը չունեի զարգացած բուրժուազիա կամ զարգացած բժշկություն:

Տրանսիլվանիայի ավատականության գլուխը իշխանն էր, որը, լինելով երկրի ամենախոշոր կալվածատերը, իր հարստությամբ և իշխանությամբ խիստ գերազանցում էր երկրի ազնվականության ներկայացուցիչներին, որոնք էլ, իրենց հերթին, հարստությամբ և հզորությամբ զիջում էին Հունգարիայի ազնվականությանը: Այն ժամանակվա Տրանսիլվանիայի 350-400 ազնվական ընտանիքներից միայն 7-10-ն էին խոշոր կալվածատերեր: Այդ պատճառով, տարածված էրնույթ էր, որ ոչ շատ հարուստ ազնվականությունը նաև առևտրով էր զբաղվում: Տրանսիլվանիայի ազնվականներից Միկլոշ Բետիկենը, օրինակ, գինու և ցորենի առևտուր էր անում: Յանոշ Բետիկենը, Տրանսիլվանիայի վարչապետ լինելով հանդերձ, զբաղվել է նաև խոշոր եղջերավոր անասունների և գինու առևտրով՝ գնելով Տրանսիլվանիայում ու վերավաճառելով տավարը՝ Վիենայում, իսկ գինին՝ Վալաքիայում: Մեկ այլ վարչապետ՝ Միհայ Տելեկին, աղի և գինու առևտուր է արել: Այսպիսով, ներգաղթած հայ վաճառականները պետք է հաշվի նստեին այս երկրում արդեն գոյություն ունեցող առևտրական հարաբերությունների հետ, մանավանդ առևտրի այն ճյուղերի, որ գտնվում էին տեղի ազնվականության ձեռքին³⁶:

Հայ առևտրականների լուրջ մրցակից էին նաև Տրանսիլվանիայում բնակվող սաքսոնները, որոնց համայնքը այժի էր ընկնում համախմբվածությամբ, խիստ օրենքներով ու փակ էր օտարների առջև: Սաքսոնները Տրանսիլվանիայում բնակվում էին XII դարից: Նրանց թիվը XVII դ. կազմում էր Տրանսիլվանիայի բնակչության 10-15%-ը, բայց նրանց քաղաքական-տնտեսական դերը երկրի կյանքում շատ ավելի մեծ էր այդ թվի համեմատ: Սաքսոնները հունգարների և սելեյների հետ միասին կազմում էին Տրանսիլվանիայի երեք ազգերից բաղկացած Օրենսդիր ժողովը: Սաքսոնական համայնքին հաջողվել էր պահպանել իր ներքին կառուցվածքը, միասնությունն ու ինքնավարությունը երկրում տիրող ավատակարգի պայմաններում, իսկ աշխույժ առևտուրը հարևան իշխանությունների հետ նրանց օգնել էր գոյատևել երկրի պատմության ամենադժվար ժամանակաշրջաններում: Սաքսոնների համայնքներում կային ազնվականությունն ձեռք բերած կալվածատերեր, սակայն համայնքի ներսում այդ անձինք իրավունք չունեին կիրառելու իրենց արտոնությունները. նրանք նույն իրավունքներն ու պարտականություններն ունեին, ինչ որ համայնքի նման նյութական կարողության տեր մյուս անդամները: Սաքսոնական համայնքը առաջին ծանր հարվածը ստացավ 1651 թ., երբ վերացրեցին նրա ինքնավարության իրավունքը դատական գործերում: Հաջորդ լուրջ հարվածը եղավ 1653 թ. օրենքը, որի համաձայն, երկրի յուրաքանչյուր ազգության (նաև ոչ սաքսոն) քաղաքացու բնակվելու իրավունք տրվեց սաքսոնների՝ մինչ այդ օտարների առջև փակ քաղաքներում: Այդ օրենքի ընդունումից հետո հայ հարուստ վաճառական ընտանիքներն իրավունք ստացան բնակություն հաստատելու

³⁶ Erdély története 1606-tól 1830-ig, p. 825.

Բեստերցե քաղաքում՝ չենթադրելով անգամ, որ այդ քաղաքի սաքսոններն են ներկայացնում իրենց համար ամենալուրջ վտանգը:

1694 թ. Բեստերցեի սաքսոն կաշեգործները հայերի դեմ բողոքով դիմեցին իշխանություններին: Նրանք բողոքում էին կաշվի հումքի թանկացման դեմ, որը, նրանց կարծիքով, առաջացել էր այն պատճառով, որ հայ կաշեգործները շրջում էին երկրով մեկ և տեղի բնակչությունից գնում վայրի և ընտանի կենդանիների մորթիներ: Ակնհայտ է, որ հայ արհեստավորները չէին սահմանափակվում զուտ իրենց արհեստով, այլ պետք եղած ժամանակ առևտուր էին անում, իսկ վաճառականները ձեռք բերած հումքը հաճախ մշակման ենթարկելուց հետո էին վաճառում: Ճիշտ է, իշխանությունները հաստատեցին սաքսոն կաշեգործների արտոնությունները, բայց դա չկարողացավ խոչընդոտել տեղի հայ կաշեգործների հետագա հաջող զարգացումը: Դա երևում է այն փաստից, որ 1710-1711 թթ. արդեն ոչ միայն սաքսոն, այլև ամբողջ Տրանսիլվանիայի կաշեգործական համքարություններն են բողոքով դիմում իշխանություններին՝ ցանկանալով ընդհանրապես արգելել հայերի ձեռքում կենտրոնացած կաշեգործությունը և կաշվի առևտուրը: Իշխանությունները, սակայն, պարզ գիտակցում էին, որ նման քայլը մեծ վնաս կհասցներ պետական շահերին, քանի որ խիստ կնվազեցներ հարկերի ձևով ներս հոսող եկամուտները, որ գանձվում էին հայ կաշեգործներից ու վաճառականներից: 1714 թ. հայերը ոչխարի մորթիների գնման իրավունք ստացան, թեպետ հայերի ու սաքսոնների միջև վեճը դեռ շարունակվում էր³⁷ (Բեստերցեի հայերի ու սաքսոնների միջև այդ վեճը և մրցակցությունն ավարտվեցին 1712 թ. հայերի արտագաղթով): Տրանսիլվանիա ներգաղթած հայերը գիտակցում էին, որ անհրաժեշտ է կարգավորել իրենց իրավական վիճակը: Տրանսիլվանիայի օրենսդրությունը 1540 և 1672 թթ. միջև մեկ անգամ՝ 1600 թ., հիշատակում է հայերին: Զարմանալի չէ, քանի որ վերջիններս երկրի բնակչության համեմատաբար փոքր մասն էին կազմում, և հարկ չկար հատուկ օրենք մշակել նրանց համար: 1672 թ. հետո, սակայն, այդպիսի առիթ է ստեղծվում: Հայերը, հասկանալով, որ իրենց իրավական վիճակը հնարավոր է ամրապնդել իշխանություններից արտոնություններ ստանալու ճանապարհով, դիմեցին Լեոպոլդ I կայսրին՝ խնդրանքով, որ Տրանսիլվանիայի տարբեր տարածքներում բնակվող հայերին մի տեղում բնակություն հաստատելու նպատակով վարձով տալ Սամոշուվարի և Գյորգենյսենտիմրեի կավածքները: Մինչ Տրանսիլվանիայի հայերի հոգևոր հովիվ Օքսենդիուս Վերգարը՝ որպես Վիենայում հայ համայնքի պատվիրակ, փորձում էր համայնքի համար վերաբնակեցման թույլտվություն և արտոնություններ ստանալ, Տրանսիլվանիայի իշխանությունները հարցաքննություններ են կատարում հայկական համայնքներում՝ պարզելու համար այդ վերաբնակման հարցը: Ըստ պաշտոնական եզրակացության՝ Բեստերցե քաղաքում բնակվող հայերը չէին ուզում Սամոշուվար տեղափոխվել, իսկ Գյորգենյսենտիմրեի բնակիչներն էլ չէին ցանկանում, որ իրենց քաղաքում այլ տեղերից հայ ընտանիքներ տեղափոխվեն ու կավածքներ վարձեն: Իշխանություններին այս վկայությունը,

ըստ

երևույ-

³⁷ Trócsányi Zsolt, *Az erdélyi örmények jogállása a Diploma Leopoldinum korában* (Հայ-հունգարական..., էջ 180).

թին, ուժով է հաջողվել ստանալ հայերից, դա զարմանալի չէ, քանի որ այլազգի տարրերի՝ կալվածք ձեռք բերելու ձգտումները կասկած ու տագնապ էին առաջացնում ֆեոդալական հասարակության մեջ³⁸: Էբեշֆավայի հայերն էլ չէին ցանկանում տեղափոխվել, մանավանդ որ իշխան Միհայ Ապաֆի II-ից 1696 թ. արտոնություններ էին ստացել, որոնք նրանց թույլ էին տալիս ազատ առևտուր անել, ազատ դավանանք ունենալ, ինքնուրույն դատավորներ ընտրել, այսինքն՝ արդեն իրավական ձեռքբերումներ ունեին իրենց համայնքի համար³⁹:

Չնայած վերը նշված բոլոր խոչընդոտներին՝ հայ արհեստավորների և վաճառականների մի խումբ 1696 թ. վարձով վերցնում է Սամոշուվարի կալվածքը և Լեոպոլդ I կայսեր կողմից ստանում ոչ միայն ազատ առևտրի, այլև հողամասերի գնման թույլտվություն: Դա մեծ առաջընթաց էր այն ժամանակվա օրենսդրության մեջ, քանի որ ոչ ազնվական խավին պատկանող անձանց չէր թույլատրվում կալվածք գնել: Կայսրի հրամանագրով նրանք նաև ազատվում էին զինվորներին օթևան տրամադրելու պարտականությունից և նույնպիսի իրավունքներ էին ստանում, որպիսիք ունեին Վինց քաղաքում բնակեցված բուլղարացիները⁴⁰: Նույն թվականին Գյորգենյսենտիմրեի հայերը ևս նույն արտոնություններն ստացան: Դրան հետևեցին իշխան Միհայ Ապաֆի II-ի՝ հայերին տրված արտոնությունները, որոնք, բացի ազատ առևտրի իրավունքից, հայերին ապահովեցին համայնքների ինքնավարությամբ ու քաղաքական իրավունքներով:

Ինչպես արդեն նշվեց, հայերի ամենատնտեսական ասպարում էր Բեստերցե քաղաքում: Տեղի հայության հոգևոր առաջնորդը մինչև իր վախճանը (1686 թ.) քահանա Զուլիֆդար Օզլու Մինասն էր: Նրան փոխարինեց Բեստերցեի բնակիչ Օքսենդիուս Վերգերեսկուլը:

Հայ վաճառականների արագ աճող հարստությունը և ազդեցությունը նախանձ էին առաջացնում քաղաքի բնակչության մեծամասնությունը կազմող սաքսոնների մեջ, և նրանք բաց չթողեցին առաջին իսկ հարմար առիթը, որ հայերին վտարեն քաղաքից: Տրանսիլվանիայի հայ ժողովրդական բանահյուսության ավանդություններից մեկի համաձայն՝ սիրո պատմություն է եղել հայերի ու սաքսոնների վեճի պատճառը, որ վերածվել է փողոցային կռիվների: Ըստ այդ ավանդույթի՝ հայ տղամարդիկ ձեռնափայտերով խփել են սաքսոններին, իսկ հայ կանայք քարեր են տեղացել թշնամու վրա, և քանի որ շատ սաքսոններ են սպանվել այդ կռվում, հայերը ստիպված են եղել շտապ հեռանալ քաղաքից⁴¹:

Մեզ հասած գրավոր աղբյուրները, սակայն, ավելի սովորական պատմության մասին են վկայում. 1712 թ. դեկտեմբերի սկզբին Բեստերցե քաղաքի Հուլցգասսե փողոցում բնակվող հայերից չորսը մահանում են: Նրանց մահվան վկայականները ոչ թե բժիշկը, այլ Մետտերսդորֆում գտնվող գերմանական գործադատի սպաներն են գրել, որոնք որպես մահվան պատճառ են նշել ինչ-որ վարակիչ հիվանդություն: Այդ դեպքից

³⁸ Նույն տեղում, էջ 170-171.

³⁹ **Ávedik Lukács**, *Szabad királyi Erzsébetváros monográfiája .Szamosújvár, 1896, V-VIII.*

⁴⁰ Նույն տեղում, էջ 101-102.

⁴¹ **Szongott Kristóf**, *Szamosújvár szab. kir. város monográfiája I, p. 112-113.*

օգտվելով՝ Բեստերցե քաղաքի խորհուրդը որոշում է ընդունել, որ Բեստերցեում բնակվող հայերը 24 ժամվա ընթացքում պետք է հեռանան քաղաքից: Հայերին թույլատրվում է վերցնել միայն ամենաանհրաժեշտ իրերը: Դրանից հետո Բեստերցեի հայերը տեղափոխվում են Սամոշուվար⁴²:

Սարդահամարի տվյալները ցույց են տալիս, որ մինչև XVIII դ. կեսն է տևել հայերի ներգաղթը Տրանսիլվանիա Մոլդովայից և Լեհաստանից: Տրանսիլվանիայի հայ գաղթավայրի ձևավորումը հիմնականում ավարտվել է XVIII դ. վերջին՝ երկրի տարբեր մասերից հայ բնակչության տեղափոխության ավարտի հետ մեկտեղ: Դյերդյոսենումիկլոշ քաղաքից հայերի մի մեծ խումբ է եկել ու բնակություն հաստատել Սամոշուվարում: Այստեղ են հաստատվել նաև նախկին Դյուլաֆեհերվարի հայ գաղութի բնակիչները: Կանտայի հայ գաղթավայրը վերացել է 1780 թ.: Դյերդյոսենումիկլոշի հայերը տեղափոխվել են շրջակա՝ Դիտրո, Ալֆալու, Ռեմեստե, Տոպլիցա, Տյոլդեշ գյուղերը, որտեղ խանութներ են բացել և առևտուր արել: XVIII դ. վերջին Տրանսիլվանիայում կազմավորվեցին երկու գլխավոր հայկական կենտրոններ՝ Սամոշուվարը և Էրժիբետվարոշը, որոնք հետագայում անվանվեցին Արմենոպոլիս և Էլիզաբետպոլիս: Սըրանցից բացի, գոյություն ունեին նաև ավելի փոքր հայկական համայնքներ Չիկսեպվիզում, Դյերդյոսենումիկլոշում, Պետելեում, Ֆելֆալույում և Գյորգենյսենտիմբեում:

Այսպիսով, XVI դարում Հունգարիա ներգաղթած հայությունը տարածության և ժամանակի մեջ երկար ճանապարհ էր անցել մայր հայրենիքից մինչև նոր բնակավայրը: Մոլդովայի և Լեհաստանի տարածքով ներգաղթած հայերը անհամասեռ խումբ էին կազմում՝ սերված լինելով պատմական Հայաստանի տարբեր տարածաշրջաններից և տարբեր ժամանակահատվածներում ժամանելով բնակության նոր վայրը՝ Տրանսիլվանիա: Այս նոր բնակավայրն այդ ժամանակաշրջանում ուներ ֆեոդալական հասարակարգ և, ներգաղթողների ազգային ու կրոնական պատկանելության նկատմամբ լինելով հանդուրժողական, տնտեսապես ու քաղաքական առումով կախված էր իր հարավային ու արևմտյան ավելի հզոր հարևան երկրներից: Ներգաղթած հայերը, որ հիմնականում արհեստավորներ ու առևտրականներ էին, ներկայացնում ու լրացնում էին այն հասարակական-տնտեսական շերտը, որ բացակայում էր կամ էլ շատ թույլ էր զարգացած Տրանսիլվանիայում: Որպես առևտրականներ՝ նրանք պետք է հաշվի նստեին այդ երկրի ազնվականության կողմից կատարվող առևտրի հետ, իսկ որպես արհեստավորներ ու առևտրականներ՝ պետք է պատրաստ լինեին այդ երկրում արդեն գործող սաքսոն, ինչպես նաև հույն, հրեա, բուլղարացի արհեստավորների և առևտրականների մրցակցությանն ու թշնամանքին: Նոր հայրենիքում բնակություն հաստատելու ընթացքում հայերը հողակտորներ ու կալվածքներ գնելու ժամանակ պետք է հաղթահարեին տեղի՝ ֆեոդալական արտոնություններին կառչող և այլազգի նորեկներին կասկածով ու խանդով վերաբերվող ազնվականության դիմադրությունը:

Ներգաղթած հայերի ազդեցիկ սատարողները՝ Տրանսիլվանիայի իշխանը, խոշոր ազնվականությունը և Հունգարիայի թագավորը հայերին

⁴² Նույն տեղում, էջ 110-116.

օգնեցին արմատներ գցել նոր հայրենիքում, որտեղ միշտ չէ, որ բարենպաստ էին ներքին և արտաքին պայմանները: Նրանք արտոնություններ տվեցին հայերին արդեն վերաբնակման շրջանում, արտոնություններ, որոնք հիմնավորեցին ներգաղթած հայության իրավական վիճակի շրջանակները՝ նրան օգնելով արդյունավետ արհեստագործական և առևտրական գործունեությամբ արժանի տեղ գրավել երկրի տնտեսական կյանքում: Հայերը թեպետ Տրանսիլվանիայի բնակչության չնչին մասն էին կազմում, սակայն զգալի դեր ունեին երկրի՝ XVII-XVIII դդ. տնտեսական կյանքում, որը պայմանավորված էր նրանց դարերի ընթացքում ձեռք բերած փորձով, երկրում ու նրա սահմաններից դուրս ունեցած տրնտեսական կապերով, աշխատասիրությամբ, դիմացկունությամբ և, իհարկե, նոր պայմաններին հարմարվելու ունակությամբ:

ИЗ ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ ВЕНГЕРСКОЙ АРМЯНСКОЙ КОЛОНИИ

ДЖОТЯН-КРАЙЧИР ПИРОШКА (Венгрия, г. Будапешт)

Резюме

Армяне обосновались в Венгрии еще в раннем средневековье. В XIII в. армянам в Венгрии были предоставлены поместья и право свободной торговли. О наличии армянского населения в Венгрии свидетельствуют названия сохранившихся на территории Венгрии и Трансильвании населенных пунктов. Из древних армянских колоний известны Эстергом (существовала до 1290 г.), Талмачи (XIV в.), а в 1497 г. армяне обосновались в городах Трансильвании, Венгрии и Галиции. К середине XIV в. относятся постройки выложенных из камня армянских церквей в Ботошани и Яссы.

В 1475 г., после завоевания Крыма тюрко-татарскими ордами, значительная часть армян переселилась в Молдавию. Затем в результате религиозных гонений началось массовое переселение армян из Молдавии в Польшу и Трансильванию (1551-1552 гг.). В дальнейшем, в середине XVII в. в Трансильванию потянулся новый поток армян-переселенцев. До этого армяне жили в Дьердьосентмиклоше, Чиксепвизе, Эржибетвароше. В последнем десятилетии XVII в. часть армян из Трансильвании перебралась в Молдавию, часть же – во внутренние районы страны. Армянская колония в Трансильвании окончательно сформировалась в конце XVIII в. (Дьердьосентмиклош, Самошуйвар, Эржибетварош). В начале XVIII в. в Трансильвании проживало около 8000 армян, которые в основном занимались торговлей и ремеслами.